

ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԴԱՏԱՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բայադյան Ա.Ա

*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,
Երևան, Հայաստան*

Ցանկացած տնտեսական գործառնություն պարտադիր ուղղորդվում է հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթային համապատասխան ձևակերպմամբ, ինչն իր հերթին արտացոլում է իրավունքի տեսակետից գործարքի կատարման փաստը՝ տվյալները դարձնելով արժանահավատ: Հաշվապահական հաշվառման տարբեր հաշվեպնդություններում փաստերի խեղաթյուրումը, տեղեկատվության կոծկումը, հարկային և այլ իրավախախտումները հայտնաբերվում են կազմակերպության ընդհանուր տնտեսական գործունեության շրջանակում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի մանրակրկիտ հետազոտմամբ, որն էլ, հարկավ, հնարավոր է դառնում դատահաշվապահական փորձաքննության իրականացման դեպքում:

Ապրանքանյութական արժեքների գծով փորձագիտական փաստաթղթային հետազոտման հիմնական նպատակն է՝ տեսական և գործնական գիտելիքների ժամանակակից ձեռքբերումների հիման վրա դատահաշվապահական փորձաքննության արդյունքում տալ ապացուցողական եզրակացություն:

Հոդվածում ներկայացվել է ապրանքանյութական արժեքների գծով դատահաշվապահական փորձաքննության իրականացման ժամանակ փաստաթղթային հետազոտման գործընթացի առանձնահատկությունները, որը թույլ կտա ավելի դյուրին դարձնել վերջիններիս գծով ստուգումների գործընթացը:

Բանալի բառեր. *դատահաշվապահական փորձաքննություն, ապրանքանյութական արժեքներ, հաշվապահական սկզբնական փաստաթղթեր, հատուկ մեթոդներ, կեղծված փաստաթղթեր, փորձագիտական հետազոտություն:*

Թղթակցական հասցեն՝ Բայադյան Աննա Աշոտի., տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, «Կառավարչական հաշվառում և աուդիտ» ամբիոնի դոցենտ: Հայաստան, Երևան, 0025, Նալբանդյան 128, հեռ. +(374)94521707 e-mail: bayadyananna82@gmail.com


Դատահաշվապահական փորձաքննության կազմակերպման ընթացքն իր մեջ ընդգրկում է ինչպես տնտեսագիտական, այնպես էլ իրավական գործընթացներ, քանի որ մի կողմից այն հիմնվում է ամուր իրավական հիմքերի վրա, որի իրականացման գործընթացը կանոնակարգվում է իրավունքի ընթացակարգային նորմերով, իսկ մյուս կողմից՝ փորձագիտական հետազոտության մեթոդաբանությունը պահանջում է հատկապես հաշվապահական հաշվառման բնագավառի խորը գիտելիքների իմացություն:

Վարչական, քաղաքացիական կամ հարուցված քրեական գործի շրջանակներում դատահաշվապահական փորձաքննություն նախաձեռնողը կազմակերպության հաշվապահական փաստաթղթերի ճիշտ ընտրություն կատարելու նպատակով կարող է ներգրավել համապատասխան մասնագետների, ովքեր կիրականացնեն փաստաթղթերի նախնական ուսումնասիրում: Փաստաթղթերի ընտրության արձանագրությունները վերաբերելի այլ նյութերի հետ տրամադրվում են փորձագետ-հաշվապահին: Ի դեպ, փորձաքննության բազմակողմանիությունն ու ամբողջականությունն ապահովելու նկատառումից ելնելով, փորձագետը կարող է միջնորդել նախաձեռնողին, որպեսզի վերջինս փորձաքննության կատարման համար ներկայացնի անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթեր:

Դատահաշվապահական փորձաքննությունը, որպես կանոն, նշանակվում է հետևյալ դեպքերում.

- երբ քննիչը, դատարանը որոշում են, որ անհրաժեշտ է իրականացնել հետազոտություն՝ հատուկ հաշվապահական գիտելիքների օգտագործմամբ,
- երբ անցկացված վերստուգման արդյունքները հակասում են քննվող գործի նյութերին և իրականության վերականգնման համար անհրաժեշտ է հատուկ փորձագիտական հետազոտություն,
- եթե վերահսկողի կողմից հաշվի չեն առնվել նյութական պատասխանատու անձի մոտ առկա այնպիսի փաստաթղթեր, որոնք կապված են ապրանքների փչացումների ակտերի, ապրանքների ապառիկ վաճառքի գրառումների հետ և այլն,
- երբ առկա է մեղադրյալի, կասկածյալի, ամբաստանյալի, տուժողի կամ նրանց ներկայացուցիչների հիմնավորված միջնորդությունը դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ,
- երբ սկզբնական փորձաքննության եզրահանգումներն ակնհայտորեն հակասում են գործով հավաքված այլ ապացույցներին,
- երբ կատարված առաջին և երկրորդ վերստուգման եզրահանգումների միջև առկա են հակասություններ,
- երբ վերահսկողի կողմից նյութական վնասը որոշելու համար կիրառվել են կասկածելի մեթոդներ,
- եթե այդպիսի անհրաժեշտությունը բխում է այլ տիպի կամ ձևի դատական փորձաքննության եզրահանգումներից (օրինակ՝ դատատեխնոլոգիական փորձաքննությունը) և այլն [1, էջ 16-17]:

Ինչպես հայտնի է, դատահաշվապահական փորձագիտական հետազոտության մեթոդները պայմանականորեն բաժանվում են ընդհանուր և հատուկ տարրերի: Ընդհանուրին վերաբերում են ընդհանուր գիտական մեթոդները, որոնք հիմնված են հետազոտման համընդհանուր ընդունված մոտեցումների վրա: Դատահաշվապահական փորձաքննության հատուկ մեթոդներին են վերաբերում հաշվարկավերլուծական, փաստաթղթային և փաստացի ստուգման մեթոդները (տե՛ս գծապատկեր 1) [1, էջ 114-118]:



Գծապատկեր 1. Դատահաշվապահական փորձաքննության ընդհանուր և հատուկ մեթոդների դասակարգումը *

Ստորև բերված աղյուսակում փորձ է արվել ամփոփ կերպով ներկայացնել հատուկ մեթոդների էությունն ու նշանակությունը, մասնավորապես՝ դատահաշվապահական փորձագիտական հետազոտություններում դրանց կիրառության տեսանկյունից:

* Կազմված է հեղինակի կողմից:

Դատահաշվապահական փորձաքննության հատուկ մեթոդների էությունն ու նշանակությունը

N	Մեթոդի անվանումը	Մեթոդի էությունը
1.	<i>Հաշվարկավերլուծական մեթոդներ՝ այդ թվում՝</i>	
1.1.	Ֆինանսատնտեսական վերլուծության մեթոդ	<p>Կիրառվում է իրավապահ մարմինների հետաքննման օբյեկտ հանդիսացած խնդրա հարույց հատվածների պատճառահետևանքային կապերի բացահայտման և որոշման ձևերի համակարգ:</p> <p>Այս մեթոդի օգնությամբ որոշվում են փաստացի ցուցանիշների շեղումները պլանայիններից, արդյունքային ցուցանիշների նկատմամբ գործոնների ազդեցությունը և այլն:</p>
1.2.	Վիճակագրական հաշվարկների մեթոդ	<p>Կիրառվում են այնպիսի վիճակագրական մեթոդներ, որոնք թույլ են տալիս որոշել էական փաստաթղթերից բացակայող հետազոտվող օբյեկտների քանակական մեծությունները և որակական բնութագրերը (սկզբնական հաշվառման փաստաթղթեր, հաշվային գրանցամատյաններ և հաշվետվություններ):</p> <p>Դատահաշվապահական փորձաքննությունում այս մեթոդի կիրառումը թույլ է տալիս որոշել ցուցանիշների ինդեքսը, սարքավորումների օգտագործման արդյունավետության գործակիցը, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսները, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտի գործունեության շահութաբերության և վճարունակության ցուցանիշների նշանակությունը:</p>
1.3.		<p>Կիրառվում է ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների նկատմամբ գործոնների ազդեցության արդյունավետության աստիճանի բացահայտման ժամանակ՝ կազմակերպության գործունեության համակարգման նպատակով: Այս մեթոդը</p>

	<p>Տնտեսամաթեմատիկական հաշվարկների մեթոդ</p>	<p>կիրառվում է կառավարման համակարգի, թողարկվող արտադրանքի ծավալի և ֆինանսական արդյունքի հաշվարկման համար՝ ապագա արտադրական կարողությունների կանխատեսման նպատակով:</p>
<p>1.4.</p>	<p>Մաթեմատիկական հաշվարկների ստուգման մեթոդ</p>	<p>Իրենից ներկայացնում է սկզբնական փաստաթղթերում և հաշվային գրանցամատյաններում տեղ գտած գրանցումների և կատարված հաշվարկների ճշտության ստուգում: Օրինակ՝ եկամտային հարկի հաշվարկման ճշտության ստուգումը:</p>
<p>2.</p>	<p><i>Փաստաթղթային ստուգման մեթոդներ, այդ թվում.</i></p>	
<p>2.1.</p>	<p>Փաստաթղթային ստուգում</p>	<p><i>Փաստաթղթային ստուգում ըստ ձևի</i> - ստուգման եղանակի էությունը հետազոտվող փաստաթղթերի վավերապայմանների առկայության ստուգումն է:</p> <p><i>Փաստաթղթերի թվաքանակային ստուգում</i>- Թվաքանակային ստուգման ժամանակ, ելնելով գործարքի առանձնահատկությունից, պետք է հաշվի առնել, թե արդյո՞ք փաստաթղթում նշված քանակը, գումարները, ծավալը ըստ էության համապատասխանում են գործարքի առանձնահատկությունները բնութագրող նորմատիվ ակտերին: Ամենից հաճախ սխալ են հաշվարկվում դրամարկղային գործառնություններին վերաբերող փաստաթղթերի հանրագումարները:</p> <p><i>Փաստաթղթերի նորմատիվային կարգի ստուգում</i> - եղանակի էությունը կայանում է նրանում, որպեսզի փորձագետը պարզի կատարված գործարքների համապատասխանության հանգամանքը հետազոտվող ժամանակաշրջանում գործող նորմատիվ ակտերի պահանջներին, ինչպես նաև</p>

		<p>կատարված գործարքների հաշվապահական ձևակերպումների ճշտությունը:</p>
<p>2.2.</p>	<p>Փաստաթղթերի համադրման մեթոդ</p>	<p><i>Քանակագումարային հաշվառման վերականգնում</i> – նշված մեթոդի կիրառման նպատակն է պարզել, թե գումարային արտահայտությամբ հետազոտվող օբյեկտում ի հայտ բերված պակասորդները կամ ավելցուկները կոնկրետ ինչ ապրանքներից են առաջացել և հաշվապահական հաշվառման տեսանկյունից այդ տարբերությունները ինչի հետևանքով կարող էին առաջանալ:</p> <p>Հսկիչ համեմատում - կիրառվում է այն օբյեկտներում, որտեղ հաշվառումը տարվում է միայն գումարային եղանակով և հնարավոր չէ լիարժեք վերականգնել քանակագումարային հաշվառումը:</p> <p>Հանդիպակաց ստուգում - իրականացվում է թե՛ քանակագումարային հաշվառման, և թե՛ գումարային հաշվառման դեպքերում: Այն դեպքում, երբ հետազոտվող օբյեկտի գործարքների արժանահավա-տության պարզման համար անհրաժեշտություն է առաջանում կատարված գործարքի մյուս կողմ հանդիսացող կազմակերպությունների ենթակայության տակ գտնվող փաստաթղթերի հետազոտման միջոցով պարզել կատարված գործարքի ճշտությունը:</p>
<p>2.3.</p>	<p>Մոդելավորում</p>	<p>Հնարավորություն է ընձեռում փորձագետին, իր իրավասության սահմաններում, նախապատրաստվող նյութերի կամ քրեական կամ քաղաքացիական նյութերի մյուս տվյալների հետ համատեղ վերականգնել կատարված գործարքներն ու դրանց արդյունքները:</p>
<p>3.</p>	<p><i>Փաստացի ստուգում, այդ թվում.</i></p>	

3.1.	Գույքագրում	Կազմակերպության գույքի առկայության և նրա ֆինանսական պարտավորությունների վիճակի ստուգումն է որոշակի ամսաթվի դրությամբ՝ փաստացի տվյալները համեմատելով հաշվապահական տվյալների հետ:
3.2.	Դիտարկում	Սոցիալական դիտարկման տեսակ է, որտեղ փորձագետը նպատակաուղղված, կազմակերպված և իմաստալից ընկալում է առաջնային տնտեսական տեղեկատվությունը տնտեսական փաստերի տեսքով:
3.3.	Փաստացի վերահսկողություն	Հսկողություն, որի շրջանակներում վերահաշվարկի, կշռման, չափման, լաբորատոր վերլուծության և օբյեկտի փաստացի վիճակի հաստատման այլ մեթոդների միջոցով բացահայտվում է վերահսկվող օբյեկտի իրական վիճակը:
3.4.	Հետազոտում	Տնտեսագիտական որոշակի մեթոդների օգնությամբ օբյեկտի որևէ հատվածի ուսումնասիրումն է:
3.5.	Հարցում	Գրավոր կամ բանավոր հարցումների միջոցով իրական փաստերի բացահայտում:
3.6.	Վերահաշվարկ	Իրենից ներկայացնում է սկզբնական փաստաթղթերում և հաշվապահական գրանցամատյաններում թվաբանական հաշվարկների ճշության ստուգում:
3.7.	Փորձագիտական գնահատում	Մեթոդի կիրառման արդյունք, որը ստացվել է փորձագետի անձնական կարծիքի կամ փորձագետների խմբի կարծիքի հիման վրա:

Ապրանքանյութական արժեքների գծով գործառնությունների փորձագիտական հետազոտման խնդիրն է՝ դրանց պակասորդի, յուրացման փաստերի, ոչ ռացիոնալ օգտագործման դեպքերի, ինչպես նաև ապրանքանյութական արժեքների շարժի հետ կապված խախտումների բացահայտումը:

Վերոնշյալ խնդիրների առավել արդյունավետ հանգուցալուծման նպատակով նպատակահարմար է կիրառել վերը բերված գիտականորեն ընդունված հատուկ մեթոդների շարքից փաստաթղթային ստուգման և փաստացի վերստուգման մեթոդներում ներառված՝ հաշվապահական համապատասխան փաստաթղթերի և գրանցումների ստուգումը (ըստ ձևի, նորմատիվային և թվաբանական եղանակների կիրառմամբ), ինչպես նաև պաշարների գծով անցկացված գույքագրման արդյունքների վերստուգումն ու, հարկ եղած դեպքում, նոր գույքագրման անցկացումը [2, էջ 42-49]:

Ապրանքանյութական արժեքների գծով հաշվառման փաստաթղթեր են հանդիսանում՝ նյութերի հաշվառման քարտը, պահեստում ապրանքանյութական արժեքների հաշվառման մատյանը, պահեստ արտադրանքի ընդունման հաշվառման մատյանը, արտադրանքի վաճառքի հաշվառման մատյանը, քանակագումարային հաշվառման քարտը, նյութերի շարժի վերաբերյալ հաշվետվությունը, 211 «Նյութեր», 215 «Արտադրանք», 216 «Ապրանքներ» սինթետիկ հաշիվների գծով գրանցամատյանները [3, էջ 49]:

Փաստաթղթերի ընտրությունը կատարվում է նախորդ գործընթացների արդյունքների հիման վրա: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն գործառնություններին, որոնց գծով սկզբնական փաստաթղթերը բացակայում են կամ դրանցում առկա չեն կոնկրետ վավերապայմաններ [4, էջ 58]:

Կազմակերպության արտադրական և նյութական պաշարների գծով ֆինանսական և հարկային հաշվառման ուղղություններով փորձագիտական հետազոտության իրականացնելու համար անհրաժեշտ է ստուգել՝ արտադրական և նյութական արժեքների գծով առաջացած դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, կազմակերպությունում դրանց օգտագործման գծով գործառնությունների հաշվառման փաստերը, պաշարների վաճառքների գծով գործառնությունները [5, էջ 211]: Արտադրական և նյութական արժեքների գծով առաջացած դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ստուգման նպատակն է հավաստիանալ, որ մատակարարների ու ստուգվող կազմակերպության նկատմամբ գրանցված պարտավորությունները հաստատված են հաշվապահական հաշվառման տվյալներով:

Խարդախությունների կատարման դեպքերը կարող են առավել մեծ չափերի հասնել գնման գործարքների իրականացման ժամանակ: Հումքի գնման ժամանակ կարող են կատարվել զանազան խախտումներ: Օրինակ, գործարքի երկու կողմերի պատասխանատու անձանց միջև փոխադարձ համաձայնությամբ խարդախությունների կատարումը, ինչը բացահայտվում է գույքագրման, համադրման և հաշվարկների համեմատման ընթացքում՝ փաստաթղթերում վավերապայմանների ճշտության ստուգման միջոցով:

Փորձագետը պետք է կարողանա պարզել նաև այն դեպքերը, երբ մի կազմակերպության նկատմամբ ունեցած դեբիտորական պարտքերի միջոցով փաստաթղթերի կեղծմամբ հետազոտվող կազմակերպությունը փորձ է արել մարել մատակարարի նկատմամբ ունեցած իր կրեդիտորական պարտքի գումարը: Մատակարարներին կարող են պահանջներ ներկայացվել այն դեպքում, երբ կազմակերպության կողմից մատակարարի նկատմամբ ունեցած պարտավորությունն ամբողջությամբ մարվել է մինչ արտադրական և նյութական պաշարների ընդունումը, սակայն պահեստում մուտքագրման ժամանակ հայտնաբերվել է դրանց գծով պակասորդ (պայմանագրով նշված քանակից քիչ պաշարների մատակարարման պարագայում), կամ էլ մուտքագրված ապրանքանյութական արժեքների ըստ գնի և որակի անհամապատասխանություն է բացահայտվել:

Կազմակերպության պահեստում արտադրական և նյութական պաշարների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման անբաժան մաս է կազմում պահեստային հաշվառման ստուգումը: Փորձը ցույց է տալիս, որ պահեստային հաշվառման վարման մեջ հիմնական խախտումներն արտացոլվում են՝ արտադրական և նյութական արժեքների տեսակների բացասական մնացորդների առկայությամբ, առանձին մուտքային փաստաթղթերով նյութերի ընդունման վերաբերյալ գրանցումների բացակայությամբ, պահեստային հաշվառման և հաշվապահության գրանցամատյանի տվյալների միջև անհամապատասխանությունների առկայությամբ: Այս կամ այն տեսակի նյութի հերթական մուտքագրումից հետո, վերջինիս բացասական մնացորդի դեպքում, այն ժամանակավորապես փակվում է, իսկ արտադրական և նյութական պաշարների քանակն այդ մեծության չափով նվազում է: Բացասական մնացորդները ցույց են տալիս չհաշվառված նյութերի ծավալը կամ հանդիսանում են չարաշահումների կատարման աղբյուր:

Ներկայումս արտադրական և նյութական արժեքների գծով հաշվապահական հաշվառման տվյալների աղավաղման հիմնական ձևերից են՝

1. շահութահարկի հաշվարկման նպատակով իրականացվող ծախսերի ուռճացումը կամ ստացվող հասույթի մեծության արհեստականորեն նվազեցումը,
2. սկզբնական փաստաթղթերի ծածկագրման ընթացքում դիտավորյալ սխալների կատարումը (նյութերի մուտքի փաստաթղթերում առավել էժան տեսակի արժեքների ծածկագրի նշումը, իսկ ծախսի փաստաթղթերում՝ առավել թանկ արժեքների ծածկագրի նշումը),
3. հումքի և նյութերի գծով հաշվառման տվյալների աղավաղումը՝ վաղուց ձևակերպված կամ կեղծ փաստաթղթերի տվյալների համակարգչային ծրագիր մուտքագրմամբ,
4. սկզբնական փաստաթղթերում անվանացուցակային համարների ծածկագրերի աղավաղումը:

Վերոնշյալ սխալների և աղավաղումների բացահայտման համար կարևոր հիմք են հանդիսանում սկզբնական փաստաթղթերը: Դրանց փորձագիտական հետազոտության ժամանակ պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ յուրաքանչյուր տնտեսական գործառնություն ուղեկցվում է մեծ քանակությամբ փոխկապակցված փաստաթղթերի ձևակերպմամբ: Ուստի, վերջիններիս արդյունավետ հետազոտման համար նպատակահարմար է փաստաթղթերի միջև կառուցել փաստաթղթաշրջանառության և տեղեկատվական կապերի սխեմա, որը կօգնի բացահայտել տարբեր փաստաթղթերում պարունակվող տվյալների միջև անհամապատասխանությունները:

Արտադրական և նյութական արժեքների դուրսգրման գծով գործառնությունները պետք է պարտադիր համապատասխան փաստաթղթերով հաստատված լինեն: Սկզբնական հաշվառման փաստաթղթերի բացակայության դեպքում գործարքներն անօրինական են: Ի դեպ, կազմակերպության արտադրական և նյութական արժեքների դուրսգրման հաշվառման ստուգման արդյունքները փորձագետի եզրակացությունում կարող են ներկայացվել առաջադրված հարցերի պատասխանների ձևակերպման ժամանակ առանձին հավելվածով:

Փորձագիտական հետազոտությամբ կեղծված փաստաթղթերի որոնման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

- Փաստաթղթերի կեղծում կարող է իրականացվել, որպես կանոն, իրար հետ փոխկապակցված տվյալների շեղման միջոցով, որի համար փաստաթղթերում կարող են ուղղումները կատարված լինել հետին ամսաթվերով:

- Հնարավոր է ամբողջովին կամ մասնակի կեղծում (նյութական կեղծում): Փաստաթղթերի մի մասը կարող է պաշտպանված լինել համարակալման միջոցով, որը դժվարացնում է փաստաթղթերի ողջ համակարգի հետազոտումը [6, էջ 117-119]:

Գրանցամատյաններում փաստաթղթերի տվյալների ճիշտ և լրիվ գրանցման փաստի ստուգման վերաբերյալ, որպեսզի փորձագետն ունենա բավարար քանակությամբ հիմնավորումներ, առաջարկվում է պահպանել հետևյալ 6 հիմնական կանոնները.

1. յուրաքանչյուր փաստաթղթի գրանցման համար բավարար հիմքերի առկայությունը,
2. բոլոր փաստաթղթերի տեղեկատվության ամբողջական գրանցումը,
3. գործունեության տնտեսական բովանդակությանը համապատասխան բոլոր փաստաթղթերի արտացոլումը և վերջիններիս գծով տվյալների հստակ քանակական փոխանցումը հաշվառման համակարգին,
4. բոլոր փաստաթղթերի ժամանակին գրանցումը,
5. բոլոր փաստաթղթերի գրանցումը տնտեսական գործունեությանը համապատասխանող հաշվային գրանցամատյաններում,
6. յուրաքանչյուր փաստաթղթի գծով հաշվառման մեկանգամյա վարում:

Այսպիսով, նկատի ունենալով վերոգրյալը, դատահաշվապահական փորձաքննության ընթացքում ապրանքանյութական արժեքների գծով փաստաթղթային

հետազոտման գործընթացի ամբողջական և արդյունավետ կերպով իրականացման նպատակով հարկ է անդրադառնալ՝

- ապրանքների, արտադրանքի առաքման պայմանագրերի առկայությանը և դրանց ձևակերպումների ճշտությանը,

- դեբիտորական և կրեդիտորական պարտքերի առկայության դեպքում դրանց առաջացման ժամկետներին և ձևավորման պատճառներին,

- վերլուծական և համախմբված հաշվառման տվյալների ամբողջականությանն ու ճշտությանը,

- պաշարների ժամանակին և ըստ անհրաժեշտության գույքագրման անցկացմանը,

- ընդունման ակտերի ձևակերպման ճշտությանը, ինչպես նաև՝ ընդունման ժամանակ ակտերում հայտնաբերված անհամապատասխանությունների առկայությանը,

- նյութական պատասխանատու անձանց կողմից ժամանակին հաշվառման փաստաթղթերի և հաշվետվությունների ներկայացմանը,

- նյութական արժեքների նկատմամբ սահմանված գների ճշտությանը, այն է՝ պայմանագրերում նշված գների և հաշվարկային փաստաթղթերում առկա տեղեկատվության համապատասխանության փաստին:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ փաստաթղթերի գրանցումների բացակայության դեպքում բնականաբար կասկած է առաջանում հաշվապահական հաշվառման հաշվետվություններում ներառված սկզբնական փաստաթղթերի տվյալների հավաստիության նկատմամբ: Սակայն և պետք է նկատի ունենալ, որ հաշվառման վարման կանոնների չպահպանումը և առկա թերացումները դեռևս չեն նշանակում, որ տվյալ կազմակերպությունում իրականացվել են ֆինանսական ոլորտի հակաօրինական գործողություններ:

Գրականության ցանկ

1. Российской, Е.Р., Эриашвили, Н.Д. „Судебно-бухгалтерская экспертиза“: учеб. пособие для студентов вузов, под ред.-М.: ЮНИТИ-ДАНА, 2007, 352с. <https://www.booksite.ru/fulltext/bu/text.pdf>
2. Бухгалтерская экспертиза : учебник / М. Ф. Сафонова, И. Н. Калинина, О. И. Швырева. — Ростов н/Д : Феникс, 2017, с.—413.
3. Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլան, ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի ապրիլի 17-ի թիվ 353-Ն հրաման: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=75961>
4. Аверьянова Т.В., Белкин Р.С., Корухов Ю.Г., Россинская Е.Р. Судебная экспертиза в гражданском, арбитражном, административном и уголовном процессе. Учебник для вузов. М.: Норма, 2003г. -272с.

https://www.studmed.ru/averyanova-tv-belkin-rs-koruhov-yug-rossinskaya-er-sudebnaya-ekspertiza-v-grazhdanskom-arbitrazhnom-administrativnom-i-ugolovnom-processe_1aac7aef3ee.html

5. Савицкий, А.А. „Судебная бухгалтерская экспертиза”, Учебное издание, ООО „Проспект”, М., 2021, 368 с. <https://www.labyrinth.ru/books/768981/>
6. Тапалова Р.Б., Судебная экспертиза: научные, организационно-правовые и методические основы, Алматы: 2015, 150 с. <https://dokumen.pub/9786010413733.html>

ПРОЦЕСС ДОКУМЕНТАЛЬНОГО ИССЛЕДОВАНИЯ ТОВАРНОМАТЕРИАЛЬНЫХ ЦЕННОСТЕЙ В СУДЕБНО-БУХГАЛТЕРСКОЙ ЭКСПЕРТИЗЕ

Баядян А.А.

Любая хозяйственная операция должна руководствоваться соответствующей исходной документацией, отражающей факт совершения сделки. Данные бухгалтерского учета считаются надежными и юридически обязательными. В случае хищений, искажений фактов, налоговых правонарушений в бухгалтерском учете и отчетности должны быть сведения о фактах нарушений, которые могут быть обнаружены в процессе тщательного расследования бухгалтерской и хозяйственной деятельности организации. Раскрытие этих фактов возможно только в случае назначения и проведения судебно-бухгалтерской экспертизы.

Основной целью экспертно-документального исследования товарных запасов является предоставление обобщенной информации о процессе судебно-бухгалтерской экспертизы на основе современных достижений теоретических и практических знаний.

Основной целью экспертно-документального исследования товарных запасов является предоставление обобщенной информации о порядке осуществления судебно-бухгалтерской экспертизы на основе современных теоретико-практических достижений отрасли.

В статье представлены особенности процесса документального исследования при проведении судебно-бухгалтерской экспертизы товарных ценностей, что позволит облегчить процесс проведения экспертных проверок последних.

Ключевые слова: *материальные ценности, учетные документы, специальные методы, подложные документы, экспертные процедуры.*

THE PROCESS OF DOCUMENTARY RESEARCH OF COMMODITY MATERIAL VALUES IN FORENSIC ACCOUNTING EXPERTISE

Bayadyan A.A.

Any business transaction must be guided by the relevant source documentation reflecting the fact of the transaction. Accounting data is considered reliable and legally binding. In case of theft, misrepresentation of facts, or tax offenses in accounting and reporting, there should be informed about the facts of violations that can be detected in the process of a thorough investigation of the accounting and economic activities of the organization. Disclosure of these facts is possible only in the case of the appointment and conduct of a forensic accounting expertise.

The primary purpose of the expert-documentary research on commodity stocks is to provide generalized information about the process of forensic accounting expertise based on modern achievements in theoretical and practical knowledge.

The main purpose of the expert-documentary study of commodity stocks is to provide generalized information on the procedure for implementing forensic accounting expertise based on modern achievements in the theoretical and practical industry.

The article presents the features of the process of documentary research during the forensic accounting expertise of commodity values, which will facilitate the process of conducting expert checks of the latter.

Keywords: *material values, accounting documents, special methods, false documents, expert procedures.*

Ներկայացվել է խմբագրության 09.09.2022

Ընդունվել է տպագրության 17.11.2022